

ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Միացյալ Հայաստանի անկախության 1919 թ. մայիսի 28-ի ակտը. պատմություն և արդիականություն» թեմայով*

Հայ Յեղափոխական Դաշնակցության և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ 2019 թվականի մայիսի 24-ին Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Միացյալ Հայաստանի անկախության 1919 թ. մայիսի 28-ի ակտը. պատմություն և արդիականություն» խորագիրը կրող գիտաժողովը, որը նվիրված էր Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման 100-ամյակին:

Հայաստանի Հանրապետության 1918–1920 թվականների պատմության կարճատև ժամանակահատվածում չի եղել որևէ այլ իրադարձություն, որում ավելի առարկայորեն դրսևորվեր հայ ժողովրդի ու Հայոց պետականության միասնության խորհուրդը, որքան 1919 թ. մայիսի 26–27-ին ՀՀ կառավարության ընդունած երկու օրենքները և մայիսի 28-ին դրանք ամբողջացրած հայտարարագիրն ու շքեղ հանդիսությունները: Այդ պատճառով Միացյալ Հայաստանի անկախության 1919 թ. մայիսի 28-ի պետական ակտի 100-ամյակը ոչ միայն պատմական կոնկրետ իրադարձության ոգեկոչման, այլև որոշակի գաղափարների ու նպատակների վերաթարմացման հնարավորություն էր գիտնականների ներկա սերնդի համար:

Դա է պատճառը, որ 2019 թ. մայիսի 24-ի գիտաժողովն ընթացավ հումանիտար գիտությունների տարբեր բնագավառներ ներկայացնող գիտնականների ու մտավորականների աշխույժ մասնակցության պայմաններում, որոնցից շատերի ելույթներն ավելին էին քան նեղ պատմագիտական ուսումնասիրությունների ու հարցադրումների ներկայացումը:

2019 թվականի մայիսի 24-ին ժամը 10.00-ին սկսված գիտաժողովի կազմկոմիտեի անունից բացման հակիրճ խոսքով հանդես եկավ «ՎԷՆ» հանդեսի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր **Գևորգ Ս. Խուդինյանը**:

Այնուհետև ՀՅ Դաշնակցության Բյուրոյի անունից գիտաժողովի մասնակիցներին իր ողջունի խոսքն ու բարեմաղթանքները ուղղեց ՀՅԴ Բյուրոյի անդամ **Կիրո Մանոյանը**:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի անունից ելույթ ունեցած ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Աշոտ Ա. Մելքոնյանը** խիստ կարևորեց հայ ժողովրդի տարբեր հատվածների միաս-

*Ընդունվել է տպագրության 12.06.2019:

նության խորհուրդը կրող նման իրադարձության նորովի ուսումնասիրության խնդիրը:

Երևանի պետական համալսարանի կողմից միջոցառման կարևորությունն ըստ արժանվույն գնահատեց և գիտաժողովի մասնակիցներին իր ողջույնի խոսքն ուղղեց ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Էդիկ Մինասյանը**:

Բացելով գիտաժողովի առաջին նիստը, որը կրում էր «**Միացյալ Հայաստանի գաղափարը և Հայաստանի Հանրապետության ներքաղաքական իրողությունները 1918–1920 թթ.**» վերտառությունը՝ ԵՊՀ համալսարհային պատմության ամբիոնի վարիչ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ալբերտ Ա. Ստեփանյանը** նիստավարի իր պարտականությանն անցնելուց առաջ համառոտ անդրադարձ կատարեց հայոց ինքնության ձևավորման այն հիմնական հանգրվաններին, որոնց բնորոշ են եղել էթնոլեզվական ու հոգևոր-մշակութային ընդհանրության վրա հիմնված՝ միասնության տարաբնույթ ընկալումները:

Գիտաժողովի առաջին նիստին ներկայացվեցին երեք գեկուցումներ:

Առաջինը «Ազգի և հայրենիքի միասնության հարացույցի փնտրտուքը Միջնադարում և Նոր ժամանակներում» գեկույցով հանդես եկավ «ՎԷՎ» հանդեսի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր **Գևորգ Ս. Խուդինյանը**: Հիմնվելով իր կողմից առաջադրված՝ Հայոց պատմության յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է «Միացյալի» իր ընկալումը կանխադրույթի վրա՝ գեկուցաբերն այդ իրողությունը մեկնաբանեց հայդեգերյան հայտնի հասկացությունների ոսպնյակով: Նրա կարծիքով՝ մեր հանրույթի **առկայությունը** պատմության մեջ գործուն **ներկայության** է վերածվել այնքանով, որքանով նա գիտակցել է իրեն իբրև մեկ ամբողջություն: Ուստի, անցյալում մեր ներկայության մասին վկայող մտավոր ու կամային ջանքերի քննությունը հնարավոր է միայն «Միացյալի» գաղափարի շուրջ սերունդների երկխոսության միջոցով:

Պետականության կորստից հետո որդեգրել ենք միասնության նոր հարացույցեր՝ հոգևոր, մշակութային, տնտեսական և այլ կովանների միջոցով փորձելով փոխհատուցել ազգային համակեցության տարածքային ու քաղաքական չափորոշիչների կորուստը: Միջնադարում Մեծ Հայքը միասնական սրբատեղիի վերածված մեր եկեղեցին իր **Հայաստանյայց** տիտղոսի մեջ ամփոփել է հոգևոր Հայաստանի ու անցյալի հիշատակները պահպանած ֆիզիկական Հայաստանի միասնության ըմբռնումը: Նոր ժամանակներում Հայաստանի՝ որպես մեկ ամբողջության գիտական ու քաղաքական ընկալումները տարանջատվել են միմյանցից, քանի որ առաջինի հիմքը դրել են Մխիթարյան հայրերը, իսկ երկրորդը ձևավորվել է եվրոպական լուսավորականության գաղափարների յուրացման ճանապարհով: Իսկ ժամանակակից ըմբռնումով ազգի միասնության հիմքը կազմող բազային արժեքների՝ ընդհանուր լեզվի, պատմության ու մշակույթի նոր՝ եվրոպակենտրոն ընկալումները քաղաքական պայքարի ասպարեզ են տեղափոխվել 1860-ականների սկզբին: Դրանք որպես արևելահայերի ու արևմտահայերի մերձեցման քաղաքական պահանջ առաջին անգամ բարձրաձայնվել են Մ. Նալբանդյանի Կ. Պոլիս կատարած պատմական այցի և ապա Զեյթունի 1862 թ. ապստամբության շրջանում: Ուստի, հայ ազգի **մեկությունը** դրսևորվել է արևելա-

հայերի ու արևմտահայերի միասնական քաղաքական պայքարի, այսինքն՝ հայ ազգային-ազատագրական շարժման տեսքով, որն իր զարգացման որոշակի հանգրվանում առաջադրել է Արևելյան ու Արևմտյան Հայաստանների միավորման քաղաքական պահանջը: Նոր ժամանակներում՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարում է, որ հայ ազգային կուսակցությունները բյուրեղացրել են Հայաստանի ամբողջականության մասին իրենց պատկերացումները: Ընդ որում, եթե Հնչակյան կուսակցությունը առաջ է քաշել ոչ թե երկու, այլ միանգամից երեք Հայաստանների միավորման առաջադրանքը, ապա ՀՅ Դաշնակցությունը՝ ընդհակառակը, չափավոր ծրագրերի, բայց արմատական գործելակերպի միջոցով քայլաքայլ ձևավորել է սեփական իրավունքների համար պայքարող հայ քաղաքական ազգը, որի ներսում ծագումով արևելահայը, արևմտահայը կամ պարսկահայը աստիճանաբար վերածվել են մեկ հայրենիքի զավակների: Եվ հենց նրանց էր հասցեագրված ՀՅԴ առաջնորդ Քրիստափոր Միքայելյանի հայտնի պատգամը՝ «Ո՛չ մի բռնություն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորված ընդհանուր շահերի գիտակցությամբ, ունի նաև կուելու անսասան վճռողականություն և կապած, միացած է դարերով սնուած ու պահպանված ընդհանուր բնագոյների ու զգացումների առողջ զարկերակով»¹:

Մակայն հայ ազգի մեկության այս հստակ սահմանումից հետո էլ ՀՅԴ-ն չէր փորձում առաջ անցնել վտանգներով լի իրականությունից, ուստի 1907-ին բանաձևելով երկու Հայաստանների գաղափարը, ստեղծում էր անհրաժեշտ նախադրյալներ՝ հաջորդ քայլին անցնելու և Միացյալ ու Անկախ Հայաստանի տեսլականը իրագործելու համար:

Այդ պատճառով Միացյալն իբրև անմիջական քաղաքական նպատակ՝ ՀՅԴ կողմից առաջադրվեց միայն Հայաստանի անկախացումից հետո՝ Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությանը հաջորդած բարենպաստ պայմաններում: Դրա իրականացմանը միտված 1919 թ. մայիսի 28-ի պետական ակտը և ապա Սևրի դաշնագրի ստորագրումն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռի հրապարակումը Միացյալ Հայաստանի համար պայքարի ուղենշային քայլերն էին: Դրանց հաջողությունը կախված էր նրանից, թե 20-րդ դարասկզբին Հայաստանի շուրջը ձևավորված քաղաքակրթական միջավայրը որքանով էր համապատասխանում նրա քաղաքական ձգտումներին: Մինչդեռ՝ 1917-ին այդ քաղաքակրթական միջավայրի թույլ օղակի՝ Ռուսաստանի դուրսմղումն ընդհանուր քաղաքակրթական տարածքից և ապա նրա խորհրդային ու հետխորհրդային դիմաշրջումները Հայաստանի հողերի միասնականացման հարցը վերածել էին համաշխարհային քաղաքականության պահեստային տարբերակի: Այն կարող է կրկին խաղարկվել միայն մեկ պարագայում՝ Արևմուտք-Ռուսաստան միասնական քաղաքակրթական տարածքի վերականգնման դեպքում: Քաղաքակրթական փակուղում հայտնված Ռուսաստանի դիմաշրջման անխուսափելիությունը ներկայումս համաշխարհային քաղաքականության ասպարեզում վերստեղծում է Հայկական հարցի վերաբացման համար անհրաժեշտ այն աշխարհաքաղաքական միջավայրը, որի ձևավորման առաջին նախանշանների ակա-

1 Քրիստափոր Միքայելյան, Կովկասահայի տագնապը, «Յեղափոխականի մտքերը», Աթենք, հրատարակություն Հ.Յ. Դաշնակցության, 1931 թ., էջ 122-123:

նատեսն ենք մենք այսօր:

Հաջորդ գեկուցումը՝ «Հատվածականության համախտանիշը 20-րդ դարակազմի հայ իրականության մեջ և նրա հաղթահարման՝ ՀՀ իշխանությունների քաղաքականությունը» ներկայացրեց Վ. Բրյուսովի անվան Լեզվահասարակագիտական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու **Կարեն Պ. Հայրապետյանը**: Բացահայտելով Հայաստանի պարբերական բաժանումների ու վերաբաժանումների արդյունք հատվածականության՝ որպես ազգային-քաղաքական երևույթի էությունը և 20-րդ դարակազմին նրա դրսևորման առանձնահատկությունները՝ գեկուցաբերն առանձնակի կանգ առավ 1917-1918 թվականներին այդ իրողության ունեցած բացասական հետևանքների վրա: Ինչպես 1918 թ. գոյամարտերի ընթացքում, այնպես էլ Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության առաջին ամիսներին հատվածականության դրսևորումները լուրջ խոչընդոտ էին թշնամուն միասնաբար դիմակայելու և պետական շինարարության ծավալման ասպարեզներում: Ուստի, ՀՀ իշխանություններն առաջնորդվելով երկրում իշխող կուսակցության՝ ՀՅ Դաշնակցության գաղափարախոսությամբ՝ խիստ կարևորում էին քաղաքականացման ճանապարհով ազգային համախտանիշի վերածվող այդ վտանգավոր երևույթի հաղթահարման անհրաժեշտությունը: Հատվածականության շուտափույթ հաղթահարման խնդրի մասին ՀՀ իշխանությունները հստակ բարձրաձայնեցին 1919 թ. փետրվարին՝ Արևմտահայ 2-րդ համագումարում:

Այնուհետև ներկայացնելով հատվածականության հաղթահարման ուղղությամբ ՀՀ իշխանությունների իրականացրած հետևողական քաղաքականության մանրամասները՝ գեկուցաբերն ընդգծեց, որ Միացյալ Հայաստանի անկախության 1919 թ. մայիսի 28-ի ակտն այդ ուղղությամբ կատարված քայլերից ամենակարևորն էր:

Գիտաժողովի առաջին նիստի վերջին գեկուցումը՝ «Միացյալ Հայաստանի անկախության մասին պետական ակտի ընդունման գործընթացը 1919 թ.», ներկայացրեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արարատ Մ. Հակոբյանը**: Զեկուցաբերը նախ՝ հիշեցրեց Հայաստանի կառավարության կողմից Եվրոպա պատվիրակություն ուղարկելու և Խաղաղության վեհաժողովում Միացյալ Հայաստանի պահանջն առաջադրելու մասին: Բացահայտելով կառավարական պատվիրակության առջև դրված խնդիրները և դրանք բաղդատելով Պողոս Նուբարի Ազգային պատվիրակության պահանջների հետ՝ գեկուցաբերը ներկայացրեց Միացյալ Հայաստանի աշխարհագրական սահմանների և անգամ՝ ապագա պաշտոնների բաժանման հարցի շուրջ ՀՅԴ-ՀԺԿ և ՀՅԴ-Սահմանադրական Ռամկավար կուսակցությունների միջև սկիզբ առած վեճերի բովանդակությունը: 1919 թ. փետրվարի 6-13-ին Երևանում գումարված Արևմտահայերի 2-րդ (Բ) համագումարը և նրա դիմումը ՀՀ իշխանություններին՝ Հայաստանի երկու մասերի վերամիավորման մասին և ճիշտ նույն օրերին՝ 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզում երկու պատվիրակությունների ղեկավարներ Ա. Ահարոնյանի և Պ. Նուբար փաշայի ստորագրությամբ ընդհանուր, Հուշագիր-**Memorandum**-ի ընդունումը, համատեղ գործունեությունը շարունակելու հույսեր ներշնչեցին: Սակայն շուտով հատվածական բնույթ ունեցող

հակասությունները տեղափոխվեցին 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում գումարված Հայ (Արևմտահայ) Ազգային 1-ին (Ա) համագումարի օրակարգ:

Այդ պայմաններում՝ 1919 թ. ապրիլի 27-ին, Հայաստանի խորհուրդն օրենք ընդունեց իր աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու և այդ ժամանակահատվածում խորհրդարանի իրավունքները կառավարությանը հանձնելու մասին: Քանի որ դադարի միջոցին խորհրդի բոլոր իրավունքները հանձնվում էին կառավարությանը, 1919 թ. ապրիլի 27-ին Հայաստանի կառավարությանը տրված՝ խորհրդարանի օրենսդրական լիազորությունների մեկամսյա ժամկետի վերջին օրերին ընդունվեցին երկու շատ պատասխանատու օրենքներ (ակտեր)՝ մայիսի 26-ին՝ **«Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին»**, իսկ հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, դրանից բխող՝ **«Հայաստանի խորհրդի համալրման մասին»**: Վերջին ակտը կազմում էր առաջինի տրամաբանական շարունակությունը՝ ՀՀ խորհրդարանը պետք է համալրվեր արևմտահայերի 12 ներկայացուցիչներով:

Քննելով 1919 թ. մայիսի 28-ին վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիայանի հրապարակած Միացյալ Հայաստանի անկախության մասին **հայտարարագրի** տեքստը՝ զեկուցաբերն ուշադրություն դարձրեց նրա երկրորդ մասում ամրագրված դրույթի՝ ՀՀ կառավարությունը որպես Միացյալ Հայաստանի կառավարություն հռչակելու սկզբունքի վրա, որը դարձավ ՀՅԴ-ՀԺԿ և ՀՅԴ-Սահմանադրական Ռամկավարներ հետագա տարածայնությունների հիմքը: Նրա կարծիքով՝ այդ բանավեճի իրական հասցեատեր Պողոս Նուբար փաշայի և նրա շրջապատի հավակնությունները զուրկ էին իրատեսական հիմքից և օբյեկտիվորեն նպաստում էին արդեն իսկ ստեղծված պետականության ու հայ ժողովրդի գաղութահայ հատվածի փոխադարձ խորթացմանը:

Գիտաժողովի առաջին նիստի ամփոփումն անցավ լուրջ քննարկումների ու կարծիքների փոխանակման մթնոլորտում: Ելույթ ունեցան ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ռուբեն Ա. Սաֆրաստյանը**, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր **Սուրեն Թ. Սարգսյանը** և Խ. Աբովյանի անվ. Հայկական մանկավարժական համալսարանից փիլիսոփայական գիտությունների թեկնածու **Դավիթ Մոսինյանը**:

Գիտաժողովի երկրորդ նիստը կրում էր **«Միացյալ Հայաստանի համար պայքարի հիմնական հանգրվանները»** խորագիրը: Նիստը վարում էր «Վէմ» հանդեսի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր **Գևորգ Ս. Խուդինյանը**:

Առաջինը զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր **Արմեն Յ. Մարուքյանը**: Նրա ներկայացրած թեման էր «Սևրի պայմանագիրն ու Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը՝ Միացյալ և Անկախ Հայաստանի ակտի իրականացման սկիզբ»:

Զեկուցաբերը նշեց, որ «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման մասին» ներպետական իրավական ակտի ոգուց ելնելով՝ 1920 թ. օգոստոսի 10-ին ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը Առաջին աշխարհամարտում պարտված Օսմանյան կայսրության հետ ստորագրեց

Սևրի հաշտության պայմանագիրը: Նրա 88-րդ հոդվածով Թուրքիան և փաստաթուղթը ստորագրող մյուս պետությունները Հայաստանը ճանաչում էին որպես ազատ ու անկախ պետություն: Պայմանագրի 89-րդ հոդվածով Թուրքիան, Հայաստանը, ինչպես նաև պայմանագիրը ստորագրող մյուս պետությունները համաձայնվում էին, որ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի նահանգներում երկու պետությունների սահմանազատումը, ինչպես նաև Հայաստանի՝ դեպի Սև ծով ելք ունենալու հարցի լուծումը թողնվի ԱՄՆ-ի որոշմանը: Սակայն Սևրի պայմանագիրը Թուրքիայի ներքաղաքական զարգացումների և աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության պատճառով չվավերացվեց և չմտավ ուժի մեջ:

Սևրի պայմանագրի ստորագրումից ամիսներ առաջ՝ Սան-Ռեմոյի կոնֆերանսում մեկնարկել էր Հայաստանի և Թուրքիայի սահմանի հստակեցման հարցով իրավարարության գործընթացը, որն ավարտվեց 1920 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի կայացրած Իրավարար վճռով: Վիլսոնի որոշման համաձայն՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգների մեծ մասը և Տրապիզոնի նահանգի մեկ երրորդը փոխանցվելու էին Հայաստանին՝ ապահովելով վերջինիս ելքը դեպի Սև ծով: Հայաստանին փոխանցվելիք տարածքը կազմելու էր 103.599 քառակուսի կիլոմետր: Վիլսոնի Իրավարար վճիռը, որը կայացվեց այդ պահին գործող միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, Հայոց ցեղասպանությունն իրագործած Օսմանյան կայսրությանը գրկում էր նշված տարածքների նկատմամբ գերիշխանությունից: Հայաստանի և Թուրքիայի սահմանի հստակեցման հարցով իրավարարության գործընթացը նախաձեռնվեց և վճիռը կայացվեց այն տրամաբանությամբ, որ միայն այդ տարածքների վրա թուրքերի իշխանության վերացումը և հայկական պետության կազմում դրանց ներառումը կարող է բավարար երաշխիք համարվել, որ ցեղասպանության զոհ դարձած հայերը կարողանան վերադառնալ հայրենիք ու վերականգնել իրենց խախտված իրավունքները:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու **Լիլիթ Հ. Հովհաննիսյանը** ներկայացրեց «Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի արտացոլումը ԱՄՆ Պետդեպարտամենտի 1917-1920 թթ. փաստաթղթերում» գեկուցումը: Զեկուցաբերը նկատեց, որ 1917-ի ապրիլին տեղի ունեցած ԱՄՆ-ի նուտքն Առաջին համաշխարհային պատերազմ և փոքր ու ճնշված ազգերի քաղաքական իրավունքների պաշտպանության վերաբերյալ նախագահ Վուդրո Վիլսոնի հայտարարությունները, Անտանտի երկրների քաղաքական օրակարգ բերեցին բռնազավթումների սկզբունքից հրաժարվելու և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հարգելու սկզբունքները: Այդ նպատակները, որոնք արդիական են նաև մեր օրերում, արտացոլած են ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի փաստաթղթերում, որոնք պաշտոնապես հրապարակվել են 1931-1947 թթ.: ԱՄՆ կառավարության կողմից: Այդ հատորները պահպանվում են Վաշինգտոնում ու Հայաստանի Ազգային արխիվում՝ միկրոժապավենների վրա: ԱՄՆ Պետդեպարտամենտի փաստաթղթերից, որոնք ուղղակիորեն վերաբերվում են 1917-1920 թթ. Միացյալ ու Անկախ Հայաստանի ստեղծման հիմնահարցին, կարևոր են՝

Ա) Թիֆլիսում ԱՄՆ հյուպատոս Ֆ. Սմիթի 1917 թ. հոկտեմբերի 19-ի

ձեպագիրը՝ ուղղված Ռուսաստանում ԱՄՆ դեսպան Դ. Ֆրենսիսին և պետքարտուղար Ռ. Լանսինգին, նաև՝ նոյեմբերի 9-ին վերջինիս հասցեագրված հեռագիրը բոլշևիկյան կառավարության նկատմամբ Անդրկովկասի իշխանության մարմինների դիրքորոշման մասին:

Բ) Նույն թվականի դեկտեմբերի 22-ին Պետդեպարտամենտի նախաձեռնությամբ ձևավորված փորձագետների հատուկ խմբի պատրաստած հանձնարարականները համաշխարհային պատերազմում ԱՄՆ-ի նպատակների և մոտալուտ հաշտության պայմանների վերաբերյալ, որոնց հիման վրա տարեվերջին Վ. Վիլսոնը պաշտոնապես հայտարարեց, որ հայերին պետք է տրվի անկախություն:

Գ) 1918 թ. հունվարի 8-ին Կոնգրեսի երկու պալատների համատեղ նիստում ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի ներկայացրած «14 կետերը» հաշտության պայմանների վերաբերյալ և հոկտեմբերի 14-ին հրապարակված դրանց պաշտոնական մեկնաբանությունները, որոնցով մի կողմից ճանաչվում էր Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածների վերամիավորման հնարավորությունը, բայց մյուս կողմից դուռ էր բացվում օսմանյան պետության տարածքային ամբողջականության վերականգնման համար:

Դ) Ուշագրավ են 1919 թ. ընթացքում, մասնավորապես՝ հունվար, մարտ և մայիս ամիսներին Փարիզի հաշտության վեհաժողովի բրիտանական և ամերիկյան պատվիրակությունների անդամների հանդիպումների և Չորսի ու Տասի խորհուրդների նիստերում Հայաստանի մանդատի հարցի քննարկումների վերաբերյալ գրառումները:

Ե) Թուրքիայում ամերիկյան լիազորներ Չարլզ Քրեյնի և Հենրի Քինգի՝ 1919 թ. օգոստոսի 28-ին Փարիզի հաշտության վեհաժողովին և Վ. Վիլսոնին, ապա հոկտեմբերի 16-ին գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորած ռազմական առաքելության՝ Պետդեպարտամենտին, այնուհետև՝ Սենատին ուղղված զեկուցագրերում ներկայացված են Կ. Պոլսից և Անատոլիայից մինչև Արևմտյան Հայաստան ու Անդրկովկաս ամերիկյան միասնական մանդատի իրագործման հնարավորությունները: Այս իմաստով ուշագրավ է նաև Ջ. Հարբորդի առաքելության անդամ, գնդապետ Ջ. Բրինթոնի հոկտեմբերի 13-ի հուշագիրն՝ ուղղված իր ղեկավարին, որի հիմնադրույթները դրվել են Ջ. Հարբորդի Ջեկուցագրի հիմքում: Ամերիկյան Պետդեպարտամենտի փաստաթղթերը ցույց են տալիս, որ պաշտպանելով հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, ինչպես նաև Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների միասնության ու անկախության գաղափարը, ԱՄՆ-ն բնավ չէր շտապում այդ ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկել կամ ստանձնել որևէ միջազգային-իրավական պարտավորություն:

Ձ) 1920 թ. հունիսի 1-ին Հայաստանի մասով մանդատի մերժումը ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից և նոյեմբերի 22-ին ՀՀ ու Թուրքիայի միջև պետական սահմանագծման վերաբերյալ Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը նշանակում էին, որ Սևրի պայմանագրով Հայկական հարցի լուծումն ԱՄՆ-ի համար լոկ ծրագիր էր, որի իրագործմանը մասնակցելու որևէ գործնական պարտավորություն և ցանկություն նա չուներ: Իսկ Սևրի պայմանագիր – Վ. Վիլսոնի Իրավարար վճիռ միջազգային իրավական համակարգը կյանքի կոչելու համար տվյալ պատմաշրջանում բացակայում էր ամենակարևորը՝ հայկական ազդեցիկ և գործուն ուժը:

Գիտաժողովի երկրորդ նիստի երրորդ զեկուցաբեր ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու **Մարիամ Վ. Հովսեփյանը** ներկայացրեց «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հայտարարության արձագանքը պոլսահայ մամուլի էջերում» թեման:

Միացյալ Հայաստանի հայտարարությունն իր արձագանքն է գտել Կ. Պոլսում լույս տեսնող հայկական առաջատար պարբերականներում: Նրանցում ամփոփված կարծիքները կարելի է բաժանել երկու խմբի.

Առաջին տեսակետն արտահայտող պարբերականները («Ճակատամարտ», «Շանթ») ունեին դաշնակցական ուղղվածություն կամ համակիր էին այդ կուսակցության դիրքորոշումներին: Բնական է, որ դրանք պաշտպանում էին Հայաստանի Առաջին Հանրապետության իշխանությունների վարած քաղաքականությունը:

Երկրորդ տեսակետն արտահայտում էին Հայ Սահմանադրական Ռամկավար և Ժողովրդական կուսակցությունների մոտեցումները պաշտպանող պոլսահայ պարբերականները («Ժամանակ», «Արագած»), որոնց կարծիքով այդ հայտարարությունը չէր արտացոլում ողջ արևմտահայության կամ նրա մեծամասնության տեսակետները:

Մարիամ Վ. Հովսեփյանը նշեց, որ իր կողմից հիշյալ խմբերի մեջ ընդգրկված պոլսահայ պարբերականները բերել են բազմաթիվ փաստարկներ՝ իրենց պատկերացումները հիմնավորելու համար: Ընդ որում, բանախոսի կարծիքով, թեև արտաքուստ դրանք բավականին համոզիչ էին, բայց կյանքը ցույց տվեց, որ իրատեսական էին Հայաստանի նորանկախ պետականությունն իբրև Միացյալ և Անկախ Հայաստանի հիմնաքար դիտարկող հրապարակումները:

Զեկույցի ամփոփման մեջ նշվեց, որ Միացյալ Հայաստանի համադրույթի որդեգրման շնորհիվ հայոց պետականությունը, չնայած իր փոքր տարածքին, վերածվեց համահայկական և միաժամանակ՝ հայաստանակենտրոն հայրենիքի, դարձավ աշխարհասփյուռ հայության բաբախուն սիրտը, որն առաջնորդվում էր բռնազավթված բնօրրան-հայրենիքի բոլոր մասերի միավորման տեսլականով:

Արցախի պետհամալսարանից պատմական գիտությունների թեկնածու **Տարոն Վ. Հակոբյանն** իր «ԼՂՀ ձևավորումը որպես նոր մեկնակետ՝ Միացյալ Հայաստանի ճանապարհին» զեկուցման մեջ ցույց տվեց, որ չնայած ԽՍՀՄ-ի գոյության 70-տարիների ընթացքում գործադրված բռնություններին ու հալածանքներին՝ արցախահայությունը երբեք չի դադարեցրել Մայր Հայաստանին միանալու համար իր անհավասար պայքարը: Հայ ժողովրդի հայրենաբնակ երկու հատվածների միավորմանն ուղղված նման քաղաքական ձգտումները Միացյալ Հայաստանի համար պայքարի նոր դրսևորումն էին:

1985 թ. հետո Գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականության արդյունքում ԽՍՀՄ-ում ստեղծված նպաստավոր պայմանները հնարավորություն ընձեռեցին նորից կյանքի կոչելու Արևելյան Հայաստանում պետականորեն կազմակերպված հայության երկու խոշոր հատվածների միավորման քաղաքական նպատակը: Այն իր մարմնավորումը գտավ Արցախյան շարժման նոր փուլում առաջադրված «Միացում» կարգախոսի մեջ: Դրա իրա-

կանացմանն ուղղված քաղաքական պայքարը հանգեցրեց Արցախի ազատագրմանը ադրբեջանական բռնատիրությունից:

Բայց ԽՍՀՄ-ի փլուզման դարաշրջանում «Միացումի» ուղին հնարավոր էր շարունակել դեպի անկախություն տանող՝ ավելի ծանր ու դժվարին ճանապարհով: Հաշվի առնելով նոր իրավիճակի առանձնահատկությունները՝ ընտրվեց այդ միակ ճիշտ, հանգրվանային տարբերակը՝ սեպտեմբերի 2-ին ընդունելով ԼՂՀ անկախության հայտարարման մասին Հռչակագիրը: Դրանով Լեռնային Ղարաբաղը, մի կողմից՝ իրեն հայտարարեց Ադրբեջանից դուրս, մյուս կողմից՝ արտաքուստ հրաժարվեց Հայաստանի հետ վերամիավորումից: Այդ պահից փոխվեց Արցախյան շարժման բնույթը, և այն ընդունեց անկախ պետականություն կերտելու շեշտված ուղղվածություն:

Հայ ժողովուրդը Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմում փայլուն հաղթանակների շնորհիվ կարողացավ հասնել իր նպատակների մասնակի իրականացմանը՝ Արցախի զգալի մասի ազատագրմանը: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ նա հրաժարվել է իր երկու հատվածները մեկ պետաքաղաքական անոթի մեջ միացած տեսնելու ցանկությունից:

Գիտաժողովի աշխատանքներն ավարտվեցին ներկայացված թեմաների վերաբերյալ աշխույժ քննարկումներով: Ելույթ ունեցան պատմաբաններ **Գայանե Մախմուրյանը, Արմեն Մարուքյանը, Կարեն Հայրապետյանը**, փիլիսոփաներ **Դավիթ Մոսինյանը, Գևորգ Հակոբյանը** և ուրիշներ: Գիտաժողովը համարվեց կայացած, ուստի կարևորվեց նրանում ներկայացված գեկույցների հրատարակման խնդիրը:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեցին **Արարատ Մ. Հակոբյանը** և **Գևորգ Ս. Խուդինյանը**:

Մարիետա Ա. Թելունց

JOINT CONFERENCE

On theme of “The Act of United Armenia of May 28, 1919:
history and modernity”

Marieta A. Telunts

СОВМЕСТНАЯ КОНФЕРЕНЦИЯ

На тему: «Акт о независимости Единой Армении
от 28 мая 1919 г.: история и современность»

Мариета А. Телунц